

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 26

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

23.09.2017թ.

ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 30-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատումը:
(Զեկուցող Ս.Ա.Առաքելյան)
2. ԵՊՀ ԻՄ-ի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների և կրեդիտների հաստատումը:
(Զեկուցող Ս.Ա.Առաքելյան)
3. 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակների հաստատումը:
(Զեկուցող Ս.Ա.Առաքելյան)
4. Ընթացիկ հարցեր

- ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի ղեկան, հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Արտաշեսի Ներսիսյանի և տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի «Որակի ապահովման կառավարումը բուհերում» աշխատությունը հրատարակման երաշխավորելու մասին:
- ԵՊՀ ԻՄ-ում ուսանողներին ԵՊՀ ԻՄ-ի կողմից տրվող անվանական կրթաթոշակների չափը սահմանելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատումը» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս.Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ գիտական խորհրդի հաստատմանն ներկայացված 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի գիտխորհրդի նիստերի ժամանակացույցի նախագիծը կազմվել է հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական ծրագիրը, ուսումնական ժամանակացույցները, խորհրդակցվել է ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների ղեկավարների հետ, քննարկվել է տնօրենության նիստում:

Արտահայտվեցին – Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, ստորաբաժանումների ղեկավարները:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը:

Որոշեցին

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 28-րդ կետի 2-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելված 1-ի:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների և կրեդիտների հաստատումը» հարցի վերաբերյալ լսեցին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, նա ներկայացրեց նախագիծը համաձայն հավելված 2-ի, հիմնավորեց և առաջարկեց հաստատել:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի ուսումնական վարչության պետ Ա. Դավթյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Ա. Ներսիսյանը: Ելույթ ունեցողները հիմնավոր համարելով փաստարկները առաջարկեցին հաստատել ներկայացվող նախագիծը:

Որոշեցին

Որոշում 26/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձերի չափն ըստ մասնագիտությունների և կրեդիտների համաձայն հավելված 2-ի:

Օրակարգի երրորդ՝ «2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի անվանական կրթաթոշակների հաստատումը» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ ֆակուլտետների գիտական խորհուրդները քննարկել և գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել ԵՊՀ ԻՄ-ում գործող անվանական կրթաթոշակների հավակնող ուսանողների անունները:

Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակի համար «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Հայկ Արթուրի Դանիելյանին, «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակի համար «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Ալբերտ Մարատի Զուրաբյանին, «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակի համար «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Սահակի Սարգսյանին, «ԵՊՀ ԻՄ» անվանական կրթաթոշակի համար «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Արուսյակ Արտավազդի Գասպարյանին, Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակի համար «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Հարությունի Քարտաշյանին:

Արտահայտվեցին – Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը: Նրանք կարևորեցին ԵՊՀ ԻՄ – ում անվանակն կրթաթոշակի

հավակնորդների օբյեկտիվ ընտրությունը, որը կարող է նպաստել ուսանողների շրջանում գիտելիքների ձեռքբերման միջոցով առողջ մրցակցության խթանմանը:

Որոշեցին

Որոշում 26/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Հայկ Արթուրի Դանիելյանին, 2017–2018 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակ՝ չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Որոշում 26/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ

կուրսի ուսանողուհի Մերի Սահակի Սարգսյանին, 2017–2018 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակ՝ վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Որոշում 26/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Ալբերտ Մարատի Զուրաբյանին, 2017–2018 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակ՝ վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Որոշում 26/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Մանկավարժություն և հոգեբանություն»

մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Արուսյակ Արտավազդի Գասպարյանին, 2017–2018 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «ԵՊՀ ԻՄ» անվանական կրթաթոշակ՝ վեց կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Որոշում 26/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 7-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության չորրորդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Հարությունի Քարտաշյանին 2017–2018 ուստարվա առաջին կիսամյակում նշանակել «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակ՝ չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու, պատշաճ կարգապահության և հասարակական ակտիվության համար:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Արտաշեսի Ներսիսյանի և տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի «Որակի ապահովման կառավարումը բուհերում» աշխատությունը հրատարակման երաշխավորելու մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2017թ. սեպտեմբերի 8 –ի թիվ 1 նիստում որոշում է կայացվել դիմել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Արտաշեսի Ներսիսյանի և տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի «Որակի ապահովման կառավարումը բուհերում» աշխատությունը հրատարակության երաշխավորելու համար: Աշխատությունը նախատեսված է կրթության կառավարիչների, ուսանողների և պրոֆեսորադասախոսական համակազմի, ինչպես նաև կրթական բարեփոխումներով հետաքրքրվողների համար: «Որակի ապահովման կառավարումը բուհերում» աշխատության խմբագիրն է ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը, գրախոսվել է տ.գ.դ., պրոֆեսոր Արմեն Ճուղուրյանի կողմից:

Արտահայտվեց – ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան Ա. Մարգարյանը:

Արտահայտվողները ելնելով որակի ապահովման բնագավառում իրենց ունեցած բազմամյա փորձից, փաստեցին, որ ներկայացվող աշխատությունը արդիական է հատկապես կրթության բնագավառի կառավարիչների, ինչպես նաև կրթության բարեփոխումներով զբաղվողների համար և առաջարկեցին երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Ա. Ներսիսյանի և տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի «Որակի ապահովման կառավարումը բուհերում» աշխատությունը և հանձնել տպագրության:

Որոշեցին

Որոշում 26/8

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել հրատարակման ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Արտաշեսի Ներսիսյանի և տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի «Որակի ապահովման կառավարումը բուհերում» աշխատությունը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ում ուսանողներին ԵՊՀ ԻՄ-ի կողմից տրվող անվանական կրթաթոշակների չափը սահմանելու մասին»:

Որոշեցին

Որոշում 26/9

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ-ում ուսանողներին ԵՊՀ ԻՄ-ի կողմից տրվող անվանական կրթաթոշակների չափը սահմանել 10 000 (տաս հազար) դրամ:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար _____ Ս. Ս. ԱԹՈՅԱՆ

23.09.2017թ.